Հաստատված է
Տնօրինության 15. 05.2023թ. թիվ 13 որոշմամբ

«PROPERTY INSURANCE» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ PI03
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

1. Ի՞ՆՉ Է «PROPERTY INSURANCE» ԾՐԱԳԻՐԸ

Ծրագիրը բնակության նպատակով օգտագործվող բնակարանների և առանձնատների համալիր ապահովագրություն է՝ նախատեսված ֆիզիկական անձանց համար:

2. Ի՞ՆՉ Է ՆԵՐԱՌՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի շրջանակներում ապահովագրվում է՝

1. **ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ և ՀԱՄԱԿԱՐԳԵՐ**, այդ թվում՝ հատակային, որմնային, առաստաղային ծածկույթներ, ներկառուցված պահարաններ, խոհանոց՝ ներկառուցված տեխնիկայով, բուխարիներ, վառարաններ, պահարանային սարքավորումներ, դռներ և պատուհաններ, էլեկտրամատակարարման ներքին և արտաքին համակարգ, ջրագիծ և կոյուղի (ներառյալ սանիտարատեխնիկական գործիքները), ջերմա- և գազամատակարարում (ներառյալ ագրեգատները և գործիքները), օդափոխում և օդորակում, աղբատարներ, անվտանգության ապահովման առարկաներ (չհրկիզվող պահարաններ, փականներ),

2. **ԿՐՈՂ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ**, այդ թվում՝ առանձնատան պատվանդանով հիմքեր, արտաքին և ներքին պատեր, կրող միջնապատեր, առաստաղ (նկուղային, միջհարկային և ձեղնահարկային), ծածկ՝ ներառյալ տանիքը, արտաքին հարդարում, պատշգամբ (ներառյալ պատշգամբի ծածկը),

3. **ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔ**, այդ թվում՝ կենցաղային և էլեկտրական տեխնիկա, հեռուստա-տեսա-լուսանկարչական սարքավորումներ, կահույք (բացառությամբ ներկառուցված տեխնիկայի), հագուստ, սպասք, գորգեր, համակարգիչներ, գրքեր, մանկական պարագաներ, մանր սպորտային սարքավորումներ, արժեքավոր գույք՝ թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրեր, կտավներ, քանդակներ և արվեստի այլ գործեր*,

4. **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝** գույքի օգտագործման, տնօրինման, տիրապետման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասը:

** Արժեքավոր գույքն ապահովագրվում է Կողմերի հատուկ համաձայնությամբ առանձին ցանկի կազմման դեպքում կամ այդպիսի ցանկ չկազմելու պայման Վկայագրում ներառելու դեպքում:*

Ապահովագրությունը չի տարածվում ապահովագրված տարածքում գտնվող, բայց Ապահովադրին/Շահառուին չպատկանող գույքի վրա:

3. Ի՞ՆՉ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՔ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

Ծրագրի շրջանակներում ապահովագրվում եք հետևյալ ռիսկերից՝

- *Հրդեհ*
- *Պայթյուն*
- *Տարերային աղետներ, բացառությամբ երկրաշարժի*
- *Ջրի պատճառած վնաս*
- *Ապակու կոտրանք*
- *Կենդանիների գործողություններ*
- *Գողություն, կողոպուտ կամ հափշտակություն՝ կոտրանքի միջոցով*
- *Երրորդ անձանց կանխամտածված գործողություններ*
- *Քաղաքացիական պատասխանատվություն*

4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել 6 ամիս կամ 1 տարի ժամկետով՝ ուժի մեջ մտնելով կնքմանը հաջորդող առնվազն 7-րդ օրը:

5. Ի՞ՆՉ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ,
- Գույքի սեփականության վկայական:

6. Ի՞ՆՉ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍԸ

Բնակարանների ապահովագրություն

ՀՀ դրամ

Մակերես, քմ.	Ներքին հարդարում և համակարգեր		Շարժական գույք		Պատասխանատվություն		Ընդհանուր Ապահովագրա-վճար
	Ապ.գումար	Ապ.վճար	Ապ.գումար	Ապ.վճար	Ապ.գումար	Ապ.վճար	
≤ 50	3 մլն	6,000	3 մլն	8,400	1 մլն	2,000	16,400
51-75	5 մլն	10,000	5 մլն	14,000			26,000
76-100	7 մլն	13,300	7 մլն	18,900			34,200
101-200	10 մլն	18,000	10 մլն	26,000			46,000
201≥	20 մլն	32,000	15 մլն	37,500			71,500

Առանձնատների ապահովագրություն

ՀՀ դրամ

Մակերես, քմ.	Ներքին հարդարում և համակարգեր		Շարժական գույք		Կրող կառուցվածքներ		Պատասխանատվություն		Ընդհանուր Ապահովագրա-վճար
	Ապ.գումար	Ապ.վճար	Ապ.գումար	Ապ.վճար	Ապ.գումար	Ապ.վճար	Ապ.գումար	Ապ.վճար	
≤ 50	3 մլն	6,600	3 մլն	9,240	2 մլն	4,400	1 մլն	2,000	22,240
51-75	5 մլն	11,000	5 մլն	15,400	3 մլն	6,600			35,000
76-100	7 մլն	14,630	7 մլն	20,790	4 մլն	7,700			45,120
101-200	10 մլն	19,800	10 մլն	28,600	4,5 մլն	8,660			59,060
201 - 300	20 մլն	35,200	15 մլն	41,250	5 մլն	8,250			86,700
301 ≥	30 մլն	49,500	20 մլն	55,000	6 մլն	9,900			116,400

- Ապահովագրությունն իրականացվում է «ոչ լրիվ ոչ համամասնական» սկզբունքով,
- Չհատուցվող գումար չի կիրառվում:

Ծրագիրը կարգավորվում է Ընկերության Խորհրդի կողմից հաստատված «Գույքի ապահովագրության պայմաններ»-ով և «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրության պայմաններով»-ով: